378

ՀԱՅՈՒ ՀՈԳԺՈՂԿՈՄԱՏ — ԶԻՄԲՈՒՆՈՒԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

ՄԱՏՂԱՇ ԶԻԵՐԻՆ ԱՃԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

636.1
Հ-94

ԳԵՈՒՂՀՐԱՏ 1934 ԵՐԵՎԱՆ

17.06.2013

21.972

ՀՍՍՀ-ՍՍՌ
Մ. Մ. Գ. Մասիսյան
404
38

24 SEP 2010

636.1
Հ-94

Հաստատված ՀՍԽՀ Հողժողկոմատի կողմից 1934 թվի նոյեմբերի 1-ին

ՊԵՏՔ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՄԵՆԱՈՒԺԵՂ ՊԱՅՔԱՐԸ՝ ՀՈԳՈՒՏ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՁԻՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀՂԻ ԶԱՄԲԻԿԻ ՀԱՋՈՂ ԾՆՈՒՆԴԻ, ԴԵՊԻ ՄԱՏՂԱՇԸ ԽՆԱՄՔՈՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՅԵՎ ՆՐԱ ՀՈԳԱՏԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ։

Ս. Մ. ԲՈՒԴՅՈՆՆԻ

ՀՐԱՀԱՆԳ

ՄԱՏՂԱՇ ՁԻԵՐԻՆ ԱՃԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձիաբուծության մեջ մատղաշների վերարտադրման և կանոնավոր դաստիարակություն տալու նպատակով անհրաժեշտ է ղեկավարվել ներքոհիշյալ կանոններով։

1. Հղի զամբիկների խնամքը

1. Մսուրային կերակրումից արոտային կերակրման անցնելու ժամանակ և հակառակը, անհրաժեշտ է այդ անցումը կատարել աստիճանաբար՝ մի քանի որվա ընթացքում։

2. Հղիության ժամանակաշրջանի 2-րդ կեսից, այսինքն վերջին զուգավորումից հաշված 5 ամիս հետո, զամբիկներին պետք է բաժանել առանձին խմբի. արգելվում է զամբիկներին ոգտագործել կոլեկտիվ և խորհրդային տնտեսության սահմաններից դուրս, իսկ տնտեսության ներսում թույլատրվում է ոգտագործել զուտիվայր բարձրանալու և իջնելու հետ չկապված թեթև աշխատանքներում։

3. Ծնելուց յերկու ամիս առաջ զամբիկներին ազատել բոլոր տեսակի աշխատանքներից, ապահովել կանոնավոր զբոսանքով և կերակրով։

Կարականապես արգելվում է կերակրել նրանց սիլոսով, բորբոսնած, փտած խոնավացած և սառած կերով։

4. Յերաժակային ձիաբուծության դեպքում, վորտեղ ծիին սկսվում է վաղ գարնանը, զամբիկներին ապահովել բաղաներով և տաք շենքերով։

5. Ծնելուց յերկու ամիս առաջ զամբիկի պայտերը հանել. մաքրելիս խոզանակ և քերիչ (դաշաբ) չգործածել։

6. Տնտեսություններում վիժումներ հայտաբերելու դեպքում անմիջապես հրավիրել անասնաբուժ և միաժամանակ վիժած զամբիկին առանձնացնել մյուսներից, վորպեսզի վարակը չտարածվի։

2. Ծնումը յեվ առաջին ոգնությունը մտրուկներին

1. Հղի զամբիկների ծնելուց 8—10 որ առաջ տեղավորել ծննդարանում կամ հարմարեցրած տաք, ընդարձակ (3,5 × 3,5 մետր) շենքերում, սահմանել մշտական (գիշեր և ցերեկ) հերթապահություն և նախապատրաստել ծնումը (շենքի ախտահանումը և ցամքարի պատրաստումը)։

2. Ծնելու առաջին նշանները յերևալուն պես, անմիջապես հրավիրել անասնաբուժակին կամ սանիտարին (յեթե կա այդպիսին), վորը պարտավոր է ցույց տալ համապատասխան ոգնություն։

Ծնելիս, յեթե քուռակը թաղանթով է պատած, անմիջապես պատռել թաղանթը, այլապես կարող է նա խեղդվել։ Ծնումն անկանոն ընթանալու դեպքում, անմիջապես հրավիրել անասնաբուժին։

3. Անջատված ընկերքն անմիջապես հեռացնել դոմից և թաղել, իսկ զամբիկի մարմնի կեղտոտ մասերը լվանալ դոլ ջրով. յերկու ժամից հետո տալ կես դույլ դոլ ջուր, նույնքան ժամանակից հետո կարելի յե նորից ջրել։ Ցանկալի յե ջրին խառնել 0,5 կիլո ալյուրի թեփ կամ ալյուր։

4. Նոր ծնած զամբիկին 4—5 որ կերակրել միայն լավորակ խոտով։

5. Ծնված մտրուկին անմիջապես չորացնել խոտով կամ շորով. բերանը, քթի անցքերն ու ականջները մաքրել լորձունքից, մոր հետ տեղավորել տաք շենքում, ծծեցնել ծնելուց 2 ժամ հետո և մի քանի որով հերթապահություն սահմանել։

3. Զամբիկների յեվ մտրուկների խնամքը ծծկերության շրջանում

1. Անհրաժեշտ է հետևել մտրուկի հետծննդյան կղկղանքի մաքրվելուն. յեթե նրա ստամոքսը կապ է, ապա վազելին քսած մատով պետք է հանել կղկղանքը։ Պետք է հետևել նույնպես՝ թե մայրը թույլ տալիս է մտրուկին ծծելու, թե վոչ. թույլ չտալու դեպքում հարկերությամբ, առանց ջղայնացնելու, զամբիկին շոյելով մոտեցնել մտրուկին ու ծծեցնել։

2. Մտրուկի փորլուծ նկատելու դեպքում, անմիջապես կանչել անասնաբուժին պատճառը պարզելու համար։ Ծնման առաջին շրջանում կաթնատատ զամբիկներին ոգտակար կլինի կթել։

3. Ծնելուց 3—4 որ հետո միայն զամբիկներին մտրուկների հետ դուրս թողնել զրոսանքի, իսկ արոտ կարելի յե ուղարկել մեկ շաբաթից հետո։

4. Ծծմայր զամբիկներին կարելի յե ոգտագործել թեթև աշխատանքներում ծնելուց միայն մեկ ամիս հետո։ Կտրականապես արգելվում է այդպիսիների ոգտագործումը հնձիչ, խոտհար, կալսիչ մեքենաների յեվ փոցխերի տակ, վորոնք կարող են մեծ վնասներ պատճառել մտրուկների կյանքին։ Աշխատանքի ժամանակ՝ ընդմիջումներին միայն թույլ տալ մտրուկին ծծելու։

5. Վերաբերմունքը դեպի մտրուկը պետք է լինի փաղաքշական՝ հենց նրա առաջին որից։ Ծծմայր զամբիկներին տնտեսություններում ոգտագործելու դեպքում, նրանց մտրուկներին, վորքան կարելի յե, շուտ սովորեցնել նոխտայի, վոտը, բարձրացնելուն, սմբակի մաքրելուն և խոզանակով մաքրելուն։

6. Ծծմայր զամբիկներին պետք է կերակրել թեփով և կանաչ խոտով. վերջիններս մեծ քանակությամբ կաթ առաջ բերելու հատկություն ունեն։

7. Մտրուկներին պետք է սովորեցնել հատիկային կերի սկսած 2 ամսական հասակից՝ սկզբում մոր հետ միասին, իսկ հետագայում՝ առանձին։

8. Վաղ գարնանը, յերբ հողը բավականաչափ չոր չէ և տաք, մտրուկներին զամբիկների հետ զրոսանքի տանելիս, թույլ չպետք է տալ, վոր մտրուկները հողի վրա պառկեն։ Դեռ լիովին չամրապնդված մտրուկներին անձրևային, քամոտ և ցուրտ յեղանակներին արոտ չպետք է թողնել։

4. Մտրուկներին մայրերից անջատելը յեվ նրանց խնամքը

1. Մտրուկներին մայրերից անջատել 6—7 ամսական հասակում։ Խմբով և միանգամից անջատել այն դեպքում, յերբ մտրուկները կանոնավոր աճել ու զարգացել են, վորի շնորհիվ մազը փոխել են արդեն։ Հեղձախտով (խեղդող) հիվանդ մտրուկներին վոչ մի դեպքում չանջատել մայրերից մինչ վերջնական առողջանալը։

2. Անջատված մորուկներին տեղավորել մորուկանոցում կամ հատուկ շենքում՝ հատկացնելով յուրաքանչյուր գլխին 20—25 խոր. մետր տարածություն։ Պետք է մեկուսացնել մորուկներին մայրերից, որպեսզի միմյանց ձայները չլսեն և մոռանան իրար։ Մորուկներին պետք է կերակրել բարձրորակ խոտով, գարով կամ վարսակով և դաղարով։

3. Մորուկանոցը պետք է լինի բարձր, չոր, քամիներից պաշտպանված և արևոտ տեղում. հատակն անպայման պետք է պատրաստվի կավից։

4. Հատուկ ուշադրություն դարձնել մորուկների մաքրման վրա, մաքրել ամեն որ խոզանակով և վոլորած ծղոտով. քերիչներով մաքրելն արգելվում է։ Մորուկներին մաքրել շենքից դուրս ձիապարանների վրա։

5. Ամենորյա մաքրման ժամանակ սմբակները պետք է մաքրել աղբից։ Մորուկների անջատման որը պետք է ստուգել բոլորի սմբակները, ուղղել և հավասարեցնել. այդ աշխատանքները հյանձնարարել փորձված պայտառի։

6. Մորուկի արագ աճն ապահովելու համար, պետք է նրանց լավ կերակրել, հանել զրոսանքի՝ արևի ճառագայթների ներգործության համար։ Յուրաքանչյուր 100 կիլո կենդանի քաշին պետք է տալ վոչ պակաս յերկու կերի միավոր, որինակ՝ $1^1/_2$—2 կիլոգրամ գարի (ցանկալի է, որ ջարդված լինի), 0,5 կիլոգրամ ցորենի թեփ, 5 կիլոգրամ բարձրորակ խոտ, 2 կիլոգրամ դաղար կամ ճակնդեղ (անպայման մանրած)։ Մսուրներում պետք է շարունակ պահել կոշտ աղի կտորներ. թթու, ճահճային, վատորակ խոտի դեպքում կերին ավելացնել կավիճ յուրաքանչյուրին կես ճաշի գդալի չափով և ցանել թեփի կամ գարու վրա, մորուկների վոսկրների կանոնավոր զարգացման համար։

7. Մորուկների ախոռները պետք է կառուցել ցածր դասավորությամբ և շարժական ձևով՝ հեշտ մաքրելու և մորուկների կողմից ախոռի կողերը կրծելու վատ սովորությունից խուսափելու համար։

8. Աշնան և ձմռան ամիսներին ամեն որ, բացառությամբ 15—20 աստիճան սառնամանիք յեղած որերից, պարբերաբար, 4—5 ժամով մորուկներին պահել բակում կամ աղլներում՝ մորուկների մարմինն ամրապնդելու և արյան շրջանառությունն արագացնելու համար։

9. Մորուկների յերամակային դասիարակման դեպքում մայրերից կարելի է անջատել նույնպես գարնանը՝ թողնելով մորուկներին ձմեռ ժամանակ մայրերի մոտ։

10. Ձմռան, ամեն որ պետք է ստուգել ծծկեր մորուկների առողջությունը. մոր կամ մորուկի հիվանդության կամ նիհարության դեպքում մորուկներին պետք է անհապաղ անջատել մայրերից և ուժեղացնել նրանց սնունդը (մացնել կերաբաժնի մեջ հատիկային կերի տեսակներ)։

11. Ծծկեր մորուկներին, արագ աճն ապահովելու համար, պետք է կերակրել խտացրած կերերով՝ տալով յուրաքանչյուրին 0,5 և մինչև իսկ մեկ կիլոգրամ գարի կամ վարսակ։

12. Գարնանը մորուկներին անջատելիս պետք է 15—20 որ դաստիարակել, վարժեցնել և նոր միայն արոտ բաց թողնել։

13. Մի տարեկան հասակում բաժանել եզ մորուկներին վորձերից և մեծահասակներից առանձին արածացնել։ Մատղաշների թիվը փոքր լինելու դեպքում, եզ մատղաշներին արածացնել ստերջ զամբիկների հետ։ Մատղաշներին արոտում հանգիստ պահելու համար, անհրաժեշտ է եզ մորուկների յերամակի հետ բաց թողնել 2—3 ստերջ մայրեր, իսկ վորձերի հետ՝ 2—3 ամորձատվածներ (կաստրատներ)։

14. Մատղաշների համար ընտրել մոտիկ, բարձր, չոր և փարթամ բուսականություն ունեցող արոտները, վորտեղ կառուցել ծածկոցներ, շոգից, անձրևից, կարկուտից և ձյունից պատսպարվելու համար։

15. Մատղաշների սմբակների ստուգումը և հավասարեցումը (յերամակային խնամքի դեպքում) կատարել յերկու անգամ՝ մինչ արոտ ուղարկելը և արոտից վերադառնալուն պես։

16. Մատղաշների համարակալումը (դաղմա խփելը) կատարել գարնանը արոտ դուրս գալուց առաջ. աղջրի (բդի) վրա դնել ֆերմայի №-ը կամ կոլխոզի և խորհտնտեսության անվան սկզբնատառը, իսկ թիակին՝ մատղաշի հերթական №-ը։ Թվի կամ տառի մեծությունը 7 սանտիմետրից ավել չպետք է լինի և անպայման պետք է ամրացվի վոտիկի վրա՝ խոշոր այրվածքներ չպատճառելու համար։

5. Մեկ յեվ յերկու տարեկան մատղաշների խնամքը

1. Եզ ու վորձ մատղաշներն արածացնել առանձին յերամակներով, հատկացնել նրանց լավորակ, բարձր և չոր արոտները։ Վաղ գարնանը, յերբ խոտը դեռ լավ չի աճել և ամռան վերջում, յերբ արոտներում խոտը չորանում և այրվում է, անհրաժեշտ է մատղաշներին լրացուցիչ կեր տալ՝ չոր խոտ՝ 3—4 կի-

լոգրամ և, ըստ հնարավորության, յուրաքանչյուրին 0,5—1 կիլոգրամ դարի կամ վարսակ։

2. Մատղաշներն արածացնել որ ու գիշեր. արոտներում հարմարություն ստեղծել մատղաշներին աննպաստ յեղանակներից, շղթից և բռաերից պաշտպանելու համար։ Մատղաշին գոմ քշելիս պետք է հետևել, վորպեսզի խմբով ներս չմտնեն՝ ջուսվածքների տեղիք չտալու համար։

3. Անընդհատ արոտներում գտնվող մատղաշների սմբակները յերկու ամիսը մեկ անգամ մաքրել և ուղղել։

4. Մեկ ու կես և յերկու տարեկան մատղաշներին ձմռանը պետք է նույնպես առատ կերակրել՝ տալով յուրաքանչյուր 100 կիլո կենդանի քաշին 1,75 կերի միավոր, որինակ՝ 1,5 տարեկան մատղաշին տալ 1,5 կիլոգրամ դարի կամ վարսակ, 6—7 կիլոգրամ խոտ և 2 կիլոգրամ գաղար։ Յերկու տարեկան մատղաշի խոտի նորման կարելի յե հասցնել 8—10 կիլոգրամի։ Մատղաշների գոմում սահմանել կարգապահական որյենտիր ներքին կանոններ։ ա) առավոտյան ժամը 6-ին ջրել, տալ կոպիտ կեր և գարու կամ վարսակի որվա նորմայի կեսը (մանրացրած գաղարի հետ)։ Դրանից հետո մատղաշներին մաքրել, գոմը մաքրել և աղբը դուրս տանել։ բ) ժամը 10-ին ջրել, տալ թեփը, հետո կոպիտ կերը և հանել զբոսանքի։ գ) ժամը 3-ին զբոսանքից հետ բերել և տալ կոպիտ կեր։ դ) ժամը 8-ին ջրել, տալ գարու կամ վարսակի մնացած մասը (մանրացրած գաղարի հետ միասին), որվա նորմայի մնացած կոպիտ կերի կեսը և մաքրել գոմն ու աղբը դուրս տանել։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Անհրաժեշտ է հատիկային կերերի կամ թեփի հետ տալ նաև կավիճ, յուրաքանչյուրին կես հացի գդալի չափով։

Հերթապահ ձիապահը կամ պահակը գիշերվա ժամը 12-ին տալիս է կոպիտ կերի մնացորդը։

5. Փետրվար և մարտ ամիսներին լավ աճած յերկու տարեկան մատղաշներին աստիճանաբար սովորեցնել լ՝ի գործիքների տեսակներին—խամուտի, ձիասարքի, դատարկ սայլ և սահնակ քաշելուն, իսկ հեծյալ տեսակներին՝ սանձի և թամբի։ Յերեք տարեկան հասակի մատղաշներին աստիճանաբար ոգտագործել անտեսության մեջ վերոհիշյալ թեթև աշխատանքներում, իսկ չորս տարեկան հասակից միայն ոգտագործել ծանր աշխատանքներում։ Կտրականապես արգելվում է սահմանված հասակից փոքր մատղաշներին նստել ու լծելը։ Յերամակից վերցրած մատղաշներին բռնի ձևով ոգտագործելը, առանց նախնական վարժեցման, կտրականապես արգելվում է։

6. Մատղաշների խնամքն ու պահպանումը եժան և մատչելի դարձնելու համար, գարնանը յերկու տարին լրացած, բայց տոհմային նշանակություն չունեցող վորձ մատղաշներին ամորձատել։ Ամորձատումից առաջ տոհմական նշանակություն ունեցող վորձ մատղաշներին առանձնացնել։ Ամորձատումը կատարել անասնաբուժի հսկողությամբ։

7. Այն մատղաշները, վորոնք տվյալ տարվա հունվարի մեկին դառնում են յերեք տարեկան, հավարվում են արտադրական պրոդուկցիա։ Եգ մատղաշները փոխադրվում են զամբիկների խումբը և յենթակա յեն զուգավորման, իսկ վորձերը համարվում են ապրանքային պրոդուկցիա և պլանի համաձայն կարող են իրացվել։

Գ.Ս. ԽՍՀՄ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՀ
Մ.Ա. Մասիսյան
ԱՄՍՍՆԻԿՈՒԹՅԱՆ ՍԵՆՅԱԿ

4074

Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Հանձնվել է արտադրության 1934 թ. նոյեմբերի 4-ին։
Ստորագրվել է տպելու 1934 թ. նոյեմբերի 14-ին։
Թուլատրված է գլավլիտի լիազոր № 308
Հրատ. № 150, տիրաժ 2000, պատվեր № 675

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՇՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

ՀՀ Ազգային գրադարան
NL0301143

ЭГЬ 10 4

21.972

Наркомзем ССРА—Управление Коневодства

ИНСТРУКЦИЯ

по выращиванию и воспитанию конского молодняка

Сельхозгиз 1934 Эривань